

## ԲՈՒՂԱՐԱԹՈՒՐՔԵՐ. ԱՆԿԱՐԱՅԻ 5-ՐԳ ՇԱՐԱՍՅՈՒՆԸ

### *Հայկարամ Նահապետյան*

Հոգվածն անդրադառնում է Բուլղարիայի ազգային փոքրամասնություններից մեկին՝ բուլղարաթուրքերին: Եվրոպական վերլուծական կայքէջը Բուլղարիայի թուրքերին բնութագրում է որպես «Արևելյան Եվրոպայի ամենահաջողակ ազգային փոքրամասնություններից մեկը»: Հայկական լրատվամիջոցներում երբեմն հիշատակվում է բուլղարաթուրքերի գործունեության մասին, հատկապես 2006թ. հունվար-փետրվար ամիսներին, երբ Սոֆիայում խորհրդարանական քննարկման առարկա դարձավ, ապա քվեարկության դրվեց Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը: Փաստաթղթի տապալման գործում «անուրանալի ավանդ» ունեցան խորհրդարանի ազգությամբ թուրք 34 պատգամավորները: Եթնիկ թուրք է երկրի օրենսդիրի փոխդեկանվարը, որը նաև գլխավորում է Բուլղարիայի խորհրդարանական պատվիրակությունը ԵՄԽԿ-ում: Բուլղարաթուրքերի հիմնած կուսակցությունը երկրի խորհրդարանում է 1990-ից անընդմեջ, կառավարող կոալիցիայի անդամ է արդեն 8 տարի: Այս բոլոր փաստերը ոչ միայն ուշագրավ են ինքնին, այլ նաև արդիական են՝ ելնելով այն դիտանկյունից, որ հասարակական-քաղաքական ակտիվ ազգային համայնքը կամ գաղթօջախը ավանդաբար համարվել է հայկական կողմի «հաղթաթուղթ» ընդդեմ Թուրքիայի և Ադրբեջանի:

Հայաստանում վարժվել են «հայկական լոբբի» հասկացությանը, որը տարբեր պետություններում կամ միջազգային կառույցներում կարող է առաջ մղել մեր շահերը, չեզոքացնել կամ ինչ-որ չափով խոչընդոտել հակահայ ձեռնարկումները: Հայկական սփյուռք ընդդեմ ադրբեջանական նավթի կամ Թուրքիայի ռեսուրսների. այսպիսի գիտակցությունն արդեն որոշակիորեն արմատավորվել է հայկական քաղաքական ու հասարակական մենթալիտետի մեջ, ապահովության ինչ-ինչ զգացողություն է ստեղծել, և դա ունի որոշակի իրական հիմքեր: Բուլղարիայի օրինակը, իսկ վերջին տարիներին՝ նաև եվրոպական այլ պետություններում (Նիդեռլանդներ, Բելգիա, Գերմանիա) թուրքական համայնքների աշխուժացումը նկատել են տալիս նոր իրողություն, այն է՝ թուրք քաղաքական գործիչների առաջխաղացում, թուրքական լոբբինգի կայացում: Զուգընթաց կազմակերպվում են նաև ադրբեջանական «դիասպորաները»: Նկատելի են դառնում նաև եվրո-

պական երկրներում ընթացք ստացող ներքին դիմադրությունը, էթնիկ թուրք գործիչների առաջխաղացումը «չափավորելու» միտումը, ինչը, սակայն, Բուլղարիայի պարագայում անհամեմատ պասիվ վիճակում է:

Բուլղարաթուրքերի շեշտակի թոփաքը ճնշված փոքրամասնության վիճակից դեպի Բուլղարիայի կառավարող ուժ միջազգային քաղաքական պատմության մեջ լոբբինգի ամենահաջողված օրինակներից մեկը կարող է համարվել, և, կարծում ենք, առանձին ուսումնասիրության առարկա է:

1909թ. ապրիլի 19-ին Ստամբուլում Օսմանյան կայսրության և Բուլղարիայի միջև կնքվեց համաձայնագիր, որով Օսմանյան Թուրքիան ճանաչեց բուլղարական թագավարության անկախությունը, իսկ վերջինս երաշխավորեց Բուլղարիայում բնակվող թուրքերի և մյուս մահմեդականների կրոնական ու քաղաքացիական ազատությունները: Անկախության հետ օսմանյան տիրապետության շրջանում իշխող դիրքերում գտնվող տեղացի թուրքերը հայտնվեցին փոքրամասնության կարգավիճակում: 20-ականներին արդեն նկատելի էր մի իրողություն, որը ներկա ուսումնասիրության առանցքում է. բուլղարաթուրքերի հարաբերությունները Թուրքիայի իշխանությունների հետ, համագործակցություն և Անկարայի շահերին համահունչ քարոզչական, լոբբիստական աշխատանք: Արդեն Մուստաֆա Քեմալի օրոք, երբ Թուրքիայում դիմակայություն կար քեմալիստների և իսլամիստական ուժերի միջև, Բուլղարիայի թուրքերը Անկարայի նոր իշխանությունների դրդմամբ հիմնեցին «Թուրան» կազմակերպությունը, որը պաշտոնապես գրանցված լինելով որպես երիտասարդական սպորտային և մշակութային միություն՝ զբաղվում էր քեմալիստական գաղափարախոսության քարոզչությամբ: Կառույցը հրատարակում էր նույնանուն «Թուրան» թերթը: Թուրքիայի հանրապետական կառավարության քարոզչությունն իրականացնում էր նաև «Դեյլիօրման» հանդեսը, մինչդեռ բուլղարաթուրքերի կրոնական հատվածը սկսեց լույս ընծայել «Մեդենիեթը», որն իրականացնում էր հակաքարոզչություն ընդդեմ Աթաթուրքի [1, p. 4]: Արդեն այդ շրջանում Բուլղարիայում տարածում էր գտնում այն տեսակետը, որ «բուլղարաթուրքերը գործիք են դառնում Անկարայի իշխանությունների ձեռքին» [2]: Մինչև 1923թ. բուլղարաթուրքերն ապրեցին առավել լիբերալ ժամանակահատված, խորհրդարանում էին մեկ տասնյակի չափ թուրք պատգամավորներ, սակայն 1923-ի հունիսի 9-ին տեղի ունեցավ իշխանափոխություն, վարչապետ Ալեքսանդր Ստամբուլսկու կառավարությունը հեռացվեց, և նոր վարչակարգի օրոք խորհրդարանում թուրք պատգամավորների թիվը 10-ից իջավ 5-ի, ապա 4-ի [2]:

1944թ. խորհրդային բանակի ստորաբաժանումների մուտքի հետ Բուլղարիայում հաստատվեցին խորհրդային կարգեր: 1947թ. ընդունված

բուլղարական սահմանադրությունը սահմանում էր փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը: «Դիմիտրովի սահմանադրությամբ» թուրքերը և մյուս փոքրամասնություններն իրավասու էին կազմակերպել դասավանդումներ ազգային լեզվով և զարգացնել ազգային մշակույթ [3, p. 1]: Առժամանակ գործում էին մի քանի հարյուրի չափ թուրքական դպրոցներ, մի քանի վարժարան, 3 թերթ, 1 ամսագիր, բուլղարական որոշ թերթեր ունեին թուրքերեն բաժիններ, կազմակերպվում էին ռադիոհեռարձակումներ: Հասարակության գրագիտության մակարդակի բարձրացման հարցում սոցիալիստական ռեժիմի հետևողականությունը նպաստեց Բուլղարիայի թուրքերի կրթվածության մակարդակի էական բարձրացմանը կարճ ժամանակահատվածում. եթե 1939-ին բուլղարաթուրքերի 15%-ն էր միայն դպրոց հաճախում, 1957-ին այդ թիվը հասավ 97%-ի [4]: Ուշագրավ է, որ դարասկզբին՝ 1905թ. բուլղարաթուրքերի շրջանում կրթվածության մակարդակը կազմում էր ընդամենը 4%: Նրանք գերազանցում էին միայն գնչուներին, մինչդեռ Բուլղարիայի ամենագրագետ համայնքը, ըստ բուլղարական և թուրքական աղբյուրների, հայկական համայնքն էր՝ 54,3%: Հրեաների դեպքում ցուցանիշը կազմում էր 53,6, հույների դեպքում՝ 35,2, բուլղարացիների դեպքում՝ 32,3% [5, p. 585]:

1949թ. կոմունիստական վարչակազմի կողմից հողի պետականացումը նպաստող գործոն դարձավ, որպեսզի հողագործությամբ զբաղվող հազարավոր թուրքեր փոխադրվեն Թուրքիա: Այս շրջանում Բուլղարիայից թուրքերի գաղթը խթանում էր նաև սոցիալիզմի հետ Բուլղարիայում հաստատված աթեիզմը, ինչը սահմանափակում էր ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մահմեդականների կրոնական իրավունքները [5, p. 3]<sup>1</sup>: Ըստ որոշ աղբյուրների՝ Բուլղարիայի սոցիալիստական վարչակարգը խթանում էր թուրքերի գաղթը դեպի Թուրքիա նաև այն պատճառով, որ բուլղարաթուրքերի շրջապատում որոշ չափով հիմնավորվել էին կոմունիստական գաղափարները, և Մոֆիան, իսկ ավելի ճիշտ՝ Մոսկվան ձգտում էին նման եղանակով Թուրքիա «արտահանել» համաշխարհային հեղափոխության և սոցիալիզմի գաղափարախոսությունը: Դա նաև Մոսկվայի «վրեժն» էր Անկարայից այդ տարիներին Կորեական պատերազմում ԱՄՆ-ի հետ դաշնակցելու դիմաց [2]:

Բուլղարիայից գաղթած թուրքերը հիմնականում բնակվեցին Մարմարա և Էզեյան ծովերի տարածաշրջաններում՝ Բուրսա, Ստամբուլ, Էսքիշեհիր, Անկարա, Քոջաեյի, Մանիսա քաղաքներում [6]: 1958թ. բուլղարական

<sup>1</sup> Բուլղարիայից թուրքերի արտագաղթի մասին բուլղար սոցիոլոգ ժեյազկովան ներկայացնում է հետևյալ տվյալները՝ 1878-1912՝ 350 հազ., 1913-34թթ.՝ 10-12 հազ., 1940-1944թթ.՝ 15 հազ., 1950-51թթ.՝ 154 հազ. 397, 1952-1988թթ.՝ 116 հազ. 521:

կոմկուսի հատուկ նիստին որոշվեց խստացնել թուրքերի հանդեպ քաղաքականությունը [6, p. 2]: 60-ականներին փակվեցին թուրքական դպրոցները, գրեթե չկար թուրքերենով մամուլ և տպագրություն: Ընթանում էր բուլղարացի թուրքերի «բուլղարացման» գործընթաց: Խնդիրն այն է, որ բուլղարական պետությունը նրանց համարում էր բուլղարացիներ, որոնք ժամանակին, օսմանյան տիրապետության շրջանում, «թուրքացվել» էին, փոխել ազգանունները: Ուշագրավ է, որ Բուլղարիայից Թուրքիա փոխադրվող թուրքերին հենց Թուրքիայում անվանում էին «բուլղարներ» կամ «գյավուրներ» [7]: «Ջումհուրիեթ» թերթն իր հրապարակումներից մեկում հարցադրումներ էր կատարել բուլղարաթուրքերի ծագման վերաբերյալ՝ հնարավոր համարելով նրանց քրիստոնեական արմատները, ինչը Բուլղարիայից Թուրքիա գաղթած թուրքերի հակազդեցությանն էր հանդիպել [8, p. 5]: Թուրքական այլ աղբյուրներ ևս հաստատում են տեսությունը, որ Բուլղարիայի թուրք և մահմեդական բնակչության զգալի մասը ժամանակին կրոնափոխ եղած քրիստոնյաներ են: «16-րդ դարում Անատոլիայում սոցիալական տեղաշարժերը հանգեցրին նրան, որ էթնիկ թուրքերի հոծ խմբեր հաստատվեցին Բուլղարիայում և այլուր Բալկանյան թերակղզում: Օսմանյան պետական քաղաքականության շրջանակում Անատոլիայից մեծ թվով մարդիկ հաստատվեցին Բուլղարիայում», - նշում են թուրք և բուլղարացի հետազոտողները [2]: «Քանի որ Բուլղարիան հանդիսանում էր Օսմանյան կայսրության մայրաքաղաքների՝ նախ Էդիրնեի (Ադրիանապոլիս - Հ.Ն.), ապա 1453-ից նաև Ստամբուլի պաշտպանական «միջնաբերդը», այն շոշափելի ուշադրության էր արժանանում: Կենտրոնական Ասիայի և Անատոլիայի թուրքերի կողմից ռազմավարական շրջանների գաղութացման պայմաններում ընթանում էր նաև տեղաբնիկ ուղղափառ քրիստոնյա բնակչության կրոնափոխություն, ինչը հատկապես քաղաքային շրջաններում հանգեցրեց ժողովրդագրական կառուցվածքի փոփոխության հոգուտ թուրքերի և մահմեդականների», - նշված է Անկարայում տպված «Թուրքերը» հանրագիտարանի 6-րդ հատորի հրապարակումներից մեկում [9, p. 584]: Այս օբյեկտիվ դիտարկումը թերևս մեկ բացթողում ունի, որ Անատոլիայի թուրքերը ևս տեղացիներ չէին, ինչն այլ քննարկման առարկա է:

1878թ. Օսմանյան կայսրության սադրագամ՝ Մեծ վեզիր Միդհատ փաշան գրել է. «Բուլղարացիների շրջանում ապրում են մեկ միլիոն մահմեդականներ: ...Նրանք նվաճման ժամանակաշրջանում և հետագա տարիներին մահմեդականություն ընդունած բուլղարացիներ են: Նրանք միևնույն երկրի գավակներն են, պատկանում են նույն ռասային և նույն արմատներն ունեն» [2]:

Բուլղարիայի կոմկուսի առաջնորդ Տոդոր Ժիվկովի 1971թ. սահմանա-

դրությունը նախորդի համեմատ պակաս հանդուրժող էր թուրքական փոքրամասնության հանդեպ. 1971-ից օրենսդրորեն սահմանափակվեցին փոքրամասնությունների իրավունքները: Թուրքերը տուժում էին նաև այն իրողությունից, որ Բուլղարիան տվյալ ժամանակաշրջանում Թուրքիայի թվով 3-րդ հակառակորդն էր համարվում Հունաստանից և ԽՍՀՄ-ից հետո: Այդ ժամանակվա Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալն ասում էր. «Անկարան ոչինչ չի կարող ձեռնարկել բուլղարաթուրքերի պաշտպանության համար, քանի դեռ Բուլղարիան և Թուրքիան հակադիր բլոկներում են» [10, p. 167]:

1984թ. դեկտեմբերին և 1985թ. հունվարին վերոնշյալ տրամաբանությամբ (բուլղարացի թուրքերը համարվում էին մահմեդականացված բուլղարացիների հետնորդներ) հարյուր հազարավոր բուլղարաթուրքեր հարկադրաբար փոխեցին թուրքական ազգանունները: Բուլղարաթուրքերի վերաբարտադրման ցուցանիշները պարզապես սարսափեցնում էին Սոֆիայի իշխանություններին: Տ.Ժիվկովը ԽՍՀՄ առաջնորդ Մ.Գորբաչովին ասում էր, որ թուրքերի թիվը տարեկան աճում է 15-16 հազարի սահմաններում և 20 տարվա ընթացքում Բուլղարիային սպասում է Կիպրոսի ճակատագիրը, այն է՝ թուրքական միջամտությամբ մասնատում փոքրամասնության իրավունքների պաշտպանության պատրվակով: Բուլղարական կառավարությունն ասում էր, որ շահագրգռված է մինչև 500 հազար թուրքերի արտագաղթով [11, pp. 1-21]: Ուսումնասիրողները նշում են, որ այդ տարիներին Բուլղարիայում ձևավորվել էր «Կիպրոսյան սինդրոմ», որն էլ ավելի ընդգծված էր դառնում Թուրքիայում հիմնականում Բուլղարիայից գաղթած թուրքերի հանրահավաքների, ռազմաշունչ կոչերի պայմաններում: Թուրքիա տեղափոխված բուլղարաթուրքերը հավաքների ընթացքում վանկարկում էին «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» կամ «Բանակը՝ դեպի Սոֆիա» [8]: Թուրքական պետությունում, որպես կանոն, այս կարգի ձեռնարկներն ընթանում են առնվազն պետական վերահսկողության կամ ուղղակի նախաձեռնության շնորհիվ, և Կիպրոսյան տարիներին ներքին հուզումները դա ևս մեկ անգամ հիմնավորել էին:

1986թ. ապրիլին որոշում ընդունվեց հասարակական վայրում թուրքերենն արգելելու վերաբերյալ, օրինախախտներին տուգանք էր սպառնում: Սահմանափակվեցին իսլամական արարողությունները, նույնիսկ արգելվեց թլպատումը [12, pp. 59-90]: Որոշ թուրք մտավորականներ համաձայնեցին գործակցել բուլղարական իշխանությունների հետ, մյուս հատվածը սկսեց ընդհատակյա շարժում, որը պետք է դառնար հետկոմունիստական Բուլղարիայում տեղացի թուրքերի ծավալած քաղաքական շարժման կորիզը [13]:

### **1. Բուլղարաթուրքերը կոմունիստական վարչակարգի տապալումից հետո**

Իրադրությունը սկսեց փոխվել կոմունիստական վարչակարգի տապալմանը զուգահեռ: Մոսկովյան «պերեստրոյկայի» հովերը հասան նաև սոցիալիստական պետություններ, խարխիվում էր տիրող կոմունիստական վարչակարգի հիմքը: 1988թ. փետրվարի 23-ին արտգործնախարարներ Մեսուր Յըլմազն ու Պետար Մլադենովը ստորագրեցին բարեկամության և գործընկերության մասին համաձայնագիր: 1989թ. հունիսի 3-ին Սոֆիան բացեց սահմանն՝ արտոնելով թուրքերի արտագաղթը: Օգոստոսի 21-ին սահմանադրությունը թուրք գաղթականների առջև կողպեց... Անկարան, քանի որ նշված ժամանակաընթացքում՝ ընդամենը 78 օրում, Բուլղարիայից Թուրքիա անցան 311 հազ. 862 էթնիկ թուրքեր, այսինքն՝ օրական 4 հազարի չափ, մինչդեռ վարչապետ Օզալը նշում էր, թե Անկարան պատրաստ է տարեկան ընդունել առավելագույնը 30 հազար քաղաքացու [6; 14, p. 567]: Հավանական է նաև, որ թուրքական պետությունն անցանկալի էր համարում Բուլղարիայի զանգվածային «պարպումը» թուրքերից, քանի որ վերջիններս կարող էին ժամանակի ընթացքում «5-րդ շարասյան» դեր կատարել իրենց համար, ինչը գործնականում իրականություն դարձավ: Հատկանշական է, որ նույն քաղաքական գործիչը, ըստ որոշ տվյալների, հորդորում էր ադրբեջանական իշխանություններին, ընդհանուր հայտարարի գալով հայկական կողմի հետ, կանխել Ղարաբաղյան շարժման հողի վրա հայաստանաբնակ ազերիների արտագաղթը՝ մինչև տրամաբանությամբ: Ադրբեջանական սովոր զանգվածի առկայությունն անկախ Հայաստանում Անկարային գործելու դաշտ կարող էր ապահովել: Մեր օրերում արդեն կարող ենք տեսնել, թե ինչպես է Թուրքիան աշխատում Իրաքի հյուսիսում բնակվող էթնիկ թուրքերի՝ թուրքմենների հետ Քուրդիստանի ձևավորման հարցը հնարավորինս «տորպեղահարելու», իրաքյան գործընթացներին միջամտելու նպատակով: Նշենք, որ 78-օրյա հատվածում Թուրքիա տեղափոխված բուլղարաթուրքերի զգալի հատվածը՝ մոտ 100 հազար քաղաքացի, վերադարձան Բուլղարիա: Թուրքիայում նրանց պետական մակարդակով պատշաճ ընդունելություն չտրվեց, առկա էր հասարակական լարվածություն ներգաղթողների դեմ: Արդյունքում՝ Բուլղարիայում 2001թ. դրությամբ բնակվում են 746 հազար թուրքեր՝ կազմելով ընդհանուր բնակչության 9,4%-ը [8, p. 10]: Նրանք բնակեցված են երկրի հարավարևելյան Քրբջալի, Հասկովո տարածաշրջաններում և հարավարևմտյան Բլագոգրադի շրջանում, ինչպես նաև հյուսիսարևելյան Ռազգրադ, Սիլիստրա, Շումեն, Տուրգովիշտե, Ռուշե, Բուրգաս շրջաններում:

80-ականների վերջերից աստիճանաբար առավել որոշակի է նկատ-

վում Անկարայի կողմից բուլղարաթուրքերի ուղղությամբ աշխատանքի ակտիվացումը: Անկարան բուլղարաթուրքերի իրավունքների հարցն առաջ էր քաշում ՄԱԿ-ում, ԵԱՀԽ-ում, Եվրախորհրդում, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունում: 1989թ. օգոստոսին Անկարային հաջողվեց ՆԱՏՕ իր դաշնակիցներից և մասնավորապես ԱՄՆ-ից «կորզել» քաղաքական հայտարարություն բուլղարաթուրքերի կացության վերաբերյալ: Գործին նպաստում էր այն, որ Հյուսիսատլանտյան դաշինքի շահերին համահունչ էր դատապարտել դեռևս սոցիալիստական Բուլղարիային: «Բուլղարիայի թուրքական ծագումով քաղաքացիների հանդեպ վերաբերմունքը մարդու իրավունքների ոտնահարման սարսափելի օրինակ է: Դաշնակիցները շարունակում են այս հարցը պահել ուշադրության կիզակետում», - ասված էր ՆԱՏՕ այդ ժամանակվա գլխավոր քարտուղար Մանֆրեդ Վեոների անունից հրապարակված հայտարարությունում [15]: Փաստաթղթի առիթով վերապահումով էր հանդես եկել միայն Հունաստանը, որը նշված հարցում տասնամյակների ընթացքում պարբերաբար սատարում էր Բուլղարիային: Խոսքը վերաբերում էր «հակառակորդ» ազգության ներկայացուցիչների իրավունքներին և, բացի այդ, Հյուսիսատլանտյան դաշինքը նույն հետևողականությունը հանդես չէր բերում, երբ խոսքը վերաբերում էր Թուրքիայի ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև հույների իրավունքների ոտնահարման աղաղակող փաստերին: Բավական է նշել, որ 50-ականներին Թուրքիայում դեռևս հաշվվում էր մոտ 200 հազար հույն, մինչդեռ մեր օրերում՝ մոտ 3 հազար: «Կիպրոսյան սինդրոմը» ևս, պետք է կարծել, ինչ-որ դերակատարում ուներ: «Հունաստանը վերապահում ունի հայտարարության առումով: Հունաստանը աներկբա է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման հարցերում, բայց և գտնում է, որ դրանք համամարդկային կիրարկում պետք է ունենան», - տեքստի մեջ գրանցել էին Աթենքի պատվիրակները:

Նույն օրը բուլղարաթուրքերի վերաբերյալ հայտարարություն հրապարակեց նաև ամերիկյան պետքարտուղարությունը: «ՆԱՏՕ մեր դաշնակիցների հետ Միացյալ Նահանգները կշարունակի որոնել իր մտահոգությունն արտահայտելու հնարավորություններ Բուլղարիայում մարդու իրավունքների ոտնահարման փաստերի կապակցությամբ, որը վերաբերում է ոչ միայն էթնիկ թուրքական ազգաբնակչությանը, այլ նաև Բուլղարիայի իրավապաշտպաններին», - ասված էր տեքստում [16]: Օգոստոսի 29-ին Վաշինգտոնը որպես «դեմարշ» նույնիսկ հետ կանչեց իր դեսպան Սոլ Պոլանսկուն:

1989-ի նոյեմբերի 10-ին Բուլղարիայում կոմկուսը հեռացվեց իշխանությունից: Արդեն դեկտեմբերի 29-ին կառավարության մակարդակով ըն-

դունվեց որոշում, իսկ 1990թ. մարտի 5-ին խորհրդարանում հաստատվեց նաև օրենք, ըստ որի՝ բուլղարաթուրքերն իրավասու էին վերականգնել թուրքական ազգանունները: Մինչև հաջորդ տարվա մարտի 1-ն ընդունվեցին 600 հազար դիմումներ [17, c.67-117]: Նույն տարում հիմնվեց բուլղարաթուրքերի հոգևոր առաջնորդի՝ մյուֆթիի ինստիտուտը: 1991թ. ընդունվեց նոր սահմանադրություն, որը լայն իրավունքներ էր շնորհում ոչ բուլղարացի քաղաքացիներին, վերացվեց թուրքերենով ուսուցման օրենսդիր արգելքը, հունվարին ընդունվեց ևս մեկ օրենք, որով 3 տարվա ընթացքում թուրքերին իրավունք էր տրվում փոխել իրենց ազգանունները կամ «ջնջել» իրենց ազգանվանը միացված սլավոնական մասնիկը՝ -ով, -ովա, -և, -ևա:

1992-ից Բուլղարիայի թուրքական դպրոցների ուսուցիչները վերապատրաստվում են Թուրքիայում: Նախնական շրջանում թուրքերենի ուսուցման համար կիրառվում էին Թուրքիայում տպված դասագրքերը, ավելի ուշ՝ 1996թ. Կրթության և գիտության նախարարությունը սկսեց հրատարակել թուրքերենի դասագրքեր: Բուլղարիայի կառավարությունը ֆինանսավորում է թուրքական դպրոցները: Լույս են տեսնում մեծ թվով թերթեր և ամսագրեր՝ «Մուսլյումանլար» («Մահմեդականներ»), «Հաք վե օզգյուրլուք» («Իրավունք և ազատություն»), «Գյուվեն» («Վստահություն»), «Ջրը Ջրը» («Օղրիդ», մանկական հանդես է), «Բալն», «Ֆիլիզ», «Իսլամ քուլթուրու» («Իսլամական մշակույթ»): Թուրքիայում կազմակերպվում է բուլղարաբնակ թուրք երեխաների ամառային հանգիստը, որի ընթացքում երեխաներն ուսանում են Ղուրան, թուրքական գրականություն, Թուրքիայի պատմություն և թուրքերեն [18]: Կա թուրքերեն ռադիոժամ, 2000թ. հոկտեմբերից նաև ամենօրյա հեռուստաերթեր, գործում է [www.bg-turk.com](http://www.bg-turk.com) եռալեզու տեղեկատվական կայքէջը: Բուլղարիայում զուգահեռաբար տպվում են թուրքական «Զաման» թերթի օրինակները: Սոֆիայում գործում է Իսլամական ինստիտուտ, Ռուշե, Շումեն և Մեսթանլի քաղաքներում՝ մահմեդական կրոնական դպրոցներ, 1989-2004թթ. ընթացքում Բուլղարիայում կառուցվել է 150 մզկիթ, ընդհանուր առմամբ մզկիթների թիվը հասել է 1150-ի, պետական հասկացումներով վերանորոգվում են հները: Բուլղարաթուրքերն իրենք են ընտրում իրենց հոգևոր առաջնորդին, որը ներկայումս Սելիմ Մահմեդն է [18; 14, p. 567]:

Թուրքական համայնքի ուղղությամբ Սոֆիայի իշխանությունների դիրքորոշման այսօրինակ արմատական վերանայմանը նպաստեցին նաև հետխորհրդային ժամանակաշրջանում Բուլղարիա-Թուրքիա հարաբերությունների շեշտակի բարելավումը, Բուլղարիայի ինտեգրումը ՆԱՏՕ-ին և Բուլղարիայի եվրաինտեգրացիոն կուրսն ու պարտավորությունները ԵՄ առջև ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության



հարցում: Թուրքիայի հետ խորանում են ինչպես երկկողմ քաղաքական-տնտեսական հարաբերությունները, այնպես էլ գործակցությունը ՆԱՏՕ շրջանակում: Երբեմնի հակառակորդներ Սոֆիան և Անկարան ներկայումս գործընկերներ են: 2004թ. Բուլղարիայում թուրքական ներդրումների ծավալը հասավ \$500 մլն-ի, իսկ թուրքական «Շիշեջամ» ընկերության կողմից ապակե տարաների արտադրության գործարանի կառուցումը ստացավ «Տարվա ներդրում» մրցանակը: Միաժամանակ Թուրքիայում սկսվել են բուլղարական ներդրումները: Երկկողմ ապրանքաշրջանառությունը հասել է \$2 մլրդ-ի:

2005-ի հունիսին 2 պետությունների միջև բացվեց նոր միջպետական սահմանադուր վարչապետեր Ռեջեփ Էրդողանի և Միմեն Սակսոբուրգոսկու մասնակցությամբ: «Այս սահմանադուրը կոյուրացնի բուլղարաթուրքերի՝ Թուրքիայի իրենց բարեկամներին այցելությունները», - նշել է Էրդողանը [19]: Վարչապետը նաև հայտարարել է, թե նոր սահմանադուրը պետք է օրինակ ծառայի տարածաշրջանային մյուս երկրների համար: Այս վերջին ջերմ ու բարեկամական հայտարարությունն առավել ուշագրավ է հայ-թուրքական փակ սահմանների պայմաններում:

Ինչպես նշվեց, եվրոպական ինտեգրացիայի գործընթացը (2007-ի հունվարի 1-ին բուլղարական պետությունն անդամակցեց Եվրամիությանը) ևս մի գործոն է, որը հարկադրում է Սոֆիային հարգել թուրքական փոքրամասնության իրավունքները: Հարևան Հունգարիան ևս ԵՄ անդամությունը դուրացնելու նպատակով 1993-ից 13 ազգային փոքրամասնություններին (այդ թվում նաև հայերին) իրավունք տվեց ներհամայնքային ընտրություններով ձևավորել մշակութային ինքնավարություններ, մշակվեց պետական դրամաշնորհների կայուն համակարգ:

«Եվրամիությանն անդամակցել ցանկացող Բուլղարիան որոշակի «գոհողություններ» է կատարում՝ շարունակելով բարելավել փոքրամասնությունների իրավունքների պայմանները: Վերջին տարիներին «բուլղարական մոդել» հասկացությունը դարձել է ազգային փոքրամասնությունների իրավունքների ընդարձակման չափանիշ», - նշում է թուրք հետազոտողը [14, p. 568]:

Այսպիսով, սկսվել է Բուլղարիայի քաղաքացի թուրքերի «ոսկեդարը»: Բուլղարաթուրքերը ներթափանցել են երկրի քաղաքական կյանք: Դեռևս 1984-ի վերջին Բուլղարիայում ձևավորվեց «Բուլղարիայի թուրքերի ազգային ազատության շարժում» ընդհատակյա կազմակերպությունը, որը գլխավորեց թուրքական համայնքի հակաիշխանական շարժումը: 1985-86թթ. կառույցն իրականացրեց ահաբեկչական գործողություններ, 1986թ. ամռանը գրավեցին և պատանդ վերցրին Սոֆիայի «Զլատնի Պիասացի»

հյուրանոցի կենվորներին՝ առաջադրելով քաղաքական պահանջներ [20]:

1990թ. հունվարի 4-ին Բուլղարիայի Վառնա քաղաքում այս շարժման ակտիվիստները գրանցեցին «Իրավունքների և ազատությունների շարժում» (ԻԱՇ) իրավաբանական անվամբ կազմակերպությունը (բուլղարերեն՝ *Движение за права и свободи*; թուրքերեն՝ *Hak ve Özgürlükler Hareketi*): Գրանցման պահին այն ուներ 33 անդամ, ներկայումս, ըստ կազմակերպության էլեկտրոնային կայքի, 68 հազար անդամ, ևս 24 հազար՝ երիտասարդական կառույցում [21]: Կազմակերպությունը գլխավորեց խորհրդային ժամանակաշրջանում քաղաքանտարկյալ Ահմեդ Դոդանը: «Այս քաղաքական իրադարձությունը փոխեց Բուլղարիայի քաղաքական քարտեզը և ազդարարեց թուրքական համայնքի տպավորիչ մուտքը ներքին քաղաքական կյանք»,- ԻԱՇ-ի քաղաքական գործունեության մեկնարկի մասին գրում է Վառնայի Բաց համալսարանի պրոֆեսոր Վլադիմիր Չուխովը: 1990թ. մարտի 26-27-ին Սոֆիայում տեղի ունեցավ կազմակերպության հիմնադիր ժողովը [22, p. 3]:

Կառույցը, իրոք, կարճ ժամանակում դարձավ բուլղարաթուրքերի հիմնական քաղաքական հենարանը: ԻԱՇ-ը որդեգրեց կենտրոնամետ լիբերալ ուղղվածություն: Ըստ բուլղարացի վերլուծաբան Չուխովի, լիբերալ գաղափարախոսության ընտրությունը 3 հիմնական պատճառ ուներ: ԻԱՇ-ը այս եղանակով ցանկանում էր ընդլայնել իր սոցիալական բազան, որպեսզի հանդես չգար որպես զուտ թուրքական, էթնիկ կուսակցություն, այլ դրա կողքին ունենար նաև համաժողովրդական գաղափարախոսություն և նշանակություն: «Դոդանը շեշտում էր, որ միայն լիբերալ հայեցակարգը կարող է ապահովել քաղաքացիական հասարակությանը փոքրամասնությունների ինտեգրման և նրանց էթնիկ ու կրոնական ինքնության պահպանության միջև հաշվեկշիռը»,- գրում է Չուխովը: Լիբերալ գաղափարախոսության համապատկերում Բուլղարիայի եվրաստլանտյան ինտեգրման կուրսը տեղավորվում էր, իսկ Դոդանի կուսակցությունը դրա ամենակտիվ ջատագովներից էր: «Դոդանը կիսում էր այն տեսակետը, որ երկրի լիակատար անդամակցությունը ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին կարող է անդամնալիորեն երաշխավորել Բուլղարիայում ազգային փոքրամասնությունների իրավունքները և ազատությունները»,- նշում էր պրոֆեսորը: Այստեղ կարելի է հավելել ևս մեկ կարևոր շարժառիթ. շարժվելով դեպի ՆԱՏՕ՝ Բուլղարիան շարժվում է դեպի Թուրքիա, ինչը թե՛ բուլղարաթուրքերի, թե՛ Անկարայի շահերի համապատկերում է, իսկ եվրաստլանտյան կուսակցությունը բուլղարաթուրքերին, բացի էթնիկ փոքրամասնության իրավունքների նկատմամբ երաշխիքներից, նաև բուլղարաթուրքերի միջոցով ԵՄ-ում թուրքանպաստ լոբբինգ սկսելու հնարավորություն է տալիս: Եվ 2007-ի հունվարի 1-ի Բուլղա-

րիայի եվրասիականացությունից հետո մենք դրա ականատեսը լինելու ենք: Կասկածից դուրս է, որ ԵՄ-ում Հայոց ցեղասպանության թեմայով օրինագծերն այսուհետ կբախվեն բուլղարաթուրքերի դիմադրությանը: Հունվարի 1-ից Եվրախորհրդարանում բուլղարական պետությունը ներկայացնող 18 պատգամավորներից 3-ը ԻԱՇ-ից են՝ Ֆիլիպ Հյուսմանովա, Չեթին Քազաք, Նեջմի Ալի [23]: Մայիսին Բուլղարիայում ընթանալու են ԵՄ-ում Բուլղարիային հատկացված 18 տեղերի հատուկ ընտրություններ, և ցուցանիշը կարող է փոխվել: Որպես ծանոթություն նշենք նաև, որ ԵՄ-ում արդեն իսկ գործում էին 2 թուրք պատգամավոր՝ ընտրված Գերմանիայից և 1-ը՝ Հոլանդիայից: Թերևս տեղին է հավելել, որ 2007-ին ակնկալվում է, որ ԵՄ մուտք կգործի առաջին հայազգի պատգամավորը՝ Ֆրանսիայի *UDF* կուսակցությունից Ալեքսի Գովջյանը:

Լիբերալ գաղափարախոսությանը նախընտրություն տալու մյուս դրդապատճառները ևս մատնում են Դոդանի շրջահայաց և խելամիտ բնավորությունը: «Լիբերալիզմը միակ գաղափարախոսական դաշտն էր, որը զբաղեցված չէր քաղաքական մյուս սուբյեկտների կողմից», - նշում էր թուրք գործիչը: Դոդանը փաստորեն գտավ բավական հարմար, ոչ զուտ թուրքական՝ «նեղ-անձնական» ուղղվածություն, որը նրան հնարավորություն ընձեռեց հանդես գալ ողջ պետության մակարդակով: «Լիբերալիզմը» նաև թուրքական կուսակցությանը եվրոպական «իմիջ» էր հաղորդում: Դոդանի հիմնած կուսակցությունը Միջազգային լիբերալ կուսակցության և Համաեվրոպական լիբերալ-ժողովրդավարական, ռեֆորմիստական կուսակցության անդամ է:

Արդեն հիմնադրման տարում՝ 1990թ. հունիսին տեղի ունեցած ընտրություններին ԻԱՇ-ը 23 տեղ ստացավ այդ ժամանակ 400 պատգամավոր ունեցող բուլղարական խորհրդարանում: Կուսակցությունը ներկայացված է եղել հետխորհրդային Բուլղարիայի բոլոր խորհրդարաններում, 1991-ի արտահերթ ընտրություններին՝ 24 տեղ (ընդ որում՝ ընդունված նոր սահմանադրության համաձայն, խորհրդարանական աթոռների թիվը նվազեցվել էր մինչև 240-ի), 1994թ.՝ 15 աթոռ, 1997թ.՝ 19:

2001 և 2005թթ. ընտրությունների արդյունքում ԻԱՇ-ը նաև կոալիցիոն կառավարության անդամ է: 2001թ. հունիսի 17-ի խորհրդարանական ընտրություններին ԻԱՇ-ը ձայների 7,45%-ով ստացավ 21 պատգամավորական մանդատ: Խորհրդարանում կար նաև 1 անկախ թուրք պատգամավոր՝ Օսման Ահմեթ Օթթայը: Թուրքական կուսակցությունը ոչ թուրքական երկրում ձևավորեց կոալիցիոն կառավարություն:

ԻԱՇ-ից էր գյուղատնտեսության և անտառների հարցերով նախարարը՝ Մեհմեթ Դիքմեն: Ֆիլիպ Հյուսմանովան, որ ներկայումս աշխատում է

Եվրախորհրդարանում, զբաղեցնում էր փոքրամասնությունների գծով պետնախարարի պաշտոնը: Ավելի վաղ նա եղել է իր ծննդավայր Միլիստրա քաղաքի մարդասիրական հարցերով փոխքաղաքապետը: Նախարար է նշանակվել 2003թ. հուլիսի 17-ին:

Խմբակցության խորհրդարանական ղեկավարն անփոփոխ Ահմեդ Դոդանն է: Լյուքսի Յունայթը ստանձնեց խորհրդարանի փոխղեկավարի պաշտոնը, նաև արտաքին քաղաքականության, պաշտպանության և անվտանգության հարցերով հանձնաժողովի փոխղեկավարն է [24]: Լյուքսի Յունայթ ղեկավարում էր ԵՄԽՎ-ում բուլղարական պատվիրակությունը(!): Նշված պատվիրակության կազմում էր նաև ԻԱՇ-ից Լյուքսի Մեսթանը, որ զուգահեռաբար Բուլղարիան ներկայացնում էր ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովում:

Ջևդեթ Չաքարովը շրջակա միջավայրի և ջրային հարցերով հանձնաժողովի ղեկավարն էր, Հասան Ադեմովը՝ աշխատանքի և սոցիալական քաղաքականության հանձնաժողովի ղեկավարը, Կասրմ Դալը՝ ներքին անվտանգության և հասարակական կարգի հանձնաժողովի փոխղեկավարը, որի անդամ էր նաև անկուսակցական Օսման Օքթայը, Քեմալ Ադիլը՝ եվրախնտեգրացիոն հարցերով հանձնաժողովի փոխղեկավարը, Նեսրին Ուգունը խորհրդարանի քարտուղարն էր: Բուլղարաթուրքերը ներգրավված էին նաև կոռուպցիայի դեմ պայքարի, Էներգետիկայի, մշակութային, լրատվական հանձնաժողովներում:

Կոալիցիոն կառավարության կրտսեր անդամները բավական ակտիվ էին գործում: Բուլղարիայում անգամ տեսակետ էր հնչում, թե «կոալիցիայի գերակշռող թևը չպետք է նման չափի ձայնի իրավունք շնորհեր թուրք գործընկերներին»: 2003-ի տարեվերջին թուրքերն անգամ բացահայտ հակամարտության մեջ մտան կոալիցիայի գործընկեր «Միմեոն երկրորդ ազգային շարժում» կուսակցության հետ: Նշված կուսակցությունից Բուլղարիայի ֆինանսների նախարար Միլեն Վելչևը հայտարարեց ծխախոտագործությանը և ֆերմերային տնտեսությանը հատկացվող պետական աջակցությունը 2005թ. 15 միլիոն բուլղարական լևի չափով՝ մոտ \$7 մլն, կրճատելու ծրագրի մասին: Քանի որ բուլղարաբնակ թուրքերի մեծ մասը ներգրավված է գյուղատնտեսության ոլորտում, թուրքական թևը հայտարարեց, որ չի պաշտպանի գալիք տարվա բյուջեի նախագիծը, իսկ խորհրդարանի ֆինանսաբյուջետային հանձնաժողովի նախագահ Ալի Օսմանիմամովը մեղադրեց գերիշխող թևին կոալիցիայի կրտսեր անդամների հետ խնդիրը չքննարկելու համար: Տարեմուտին բուլղարական պետության բյուջեի հարցն առկախվեց: Երկրի վարչապետ Մակսոգուրբոդսկու միջնորդությամբ խնդիրը հարթվեց կոալիցիայի ավագ անդամների մասնակի

զիջումների հաշվին [25]:

Մեկ այլ պարագայում կուսակցության ղեկավար Դոդանը հայտարարեց, որ հետ կվերադարձնի իշխանություններից ստացած 1-ին աստիճանի «Մտարա Պլանինաե» պետական շքանշանը, եթե իշխանությունները նույնանման շքանշան հանձնեն խորհրդային շրջանում Բուլղարիայի գլխավոր դատախազ աշխատած Վասիլ Մրիչկովին: Թուրք գործչի խոսքով՝ 1986-90թթ. Մրիչկովը բանտերն է նետել հարյուրավոր թուրք քաղաքացիների, իսկ «դահիճն ու գոհը չպետք է նույն շքանշանից ստանան» [26]:

2005թ. հունիսի 25-ին տեղի ունեցան նոր խորհրդարանական ընտրություններ: Կուսակցության հաջողությունն առավել տպավորիչ էր. այն ստացավ քվեների 14,07%-ը, օրենսդիր անցան ԻԱՇ-ի 34 անդամ, որոնցից 2-ը բուլղարացի էին: Ձևավորվեց նոր կոալիցիա այս անգամ 3 կուսակցությունների կողմից՝ Բուլղարիայի սոցիալիստական կուսակցություն, «Միմեոն երկրորդ ազգային շարժում» և ԻԱՇ [24]: Կառավարությունը գործում է առայսօր:

Ալիսուման Բմանովը պահպանեց պաշտոնը ֆինանսաբյուջետային և գիտակրթական հանձնաժողովում: Լյուբֆի Մեսթանը կրթության և գիտության հանձնաժողովի ղեկավարն ու քաղաքացիական հասարակության և մամուլի հանձնաժողովի անդամն էր, Հասան Ադեմովը՝ աշխատանքի և սոցիալական քաղաքականության հանձնաժողովի ղեկավարը և առողջապահության հանձնաժողովի անդամը, Ահմեդ Յուսեին՝ մարդու իրավունքների և կրոնական հարցերով հանձնաժողովի փոխղեկավարը և ներքին անվտանգության ու հասարակական կարգի հանձնաժողովի անդամը, Կասիմ Դալը՝ պաշտպանության հանձնաժողովի փոխղեկավարը: ԻԱՇ-ը լայնորեն ներկայացված է նաև այլ հանձնաժողովներում:

Գործող՝ 40-րդ կառավարությունում թրքուհի Էմել Էթեմը զբաղեցնում է փոխվարչապետի և բնական ռեսուրսների նախարարի պաշտոնը: Նաև զբաղվում է ազգային փոքրամասնությունների հարցերով: Նշված կուսակցությունից է գյուղատնտեսության նախարար Նիհաթ Քաբիրը, Ջևդեթ Չաքարովը կրկին ստանձնել է շրջակա միջավայրի նախարարի պաշտոնը: Բուլղարիայի թուրքաբնակ շրջաններում ևս ԻԱՇ-ը հիմնովին իր ձեռքն առավ տեղական ինքնակառավարման գործը. 27 քաղաքապետեր և 654 գյուղապետեր 2001-2005թթ. նշված կուսակցությունից էին: 2005թ. հոկտեմբերին կայացած տեղական ինքնակառավարման հերթական ընտրություններում բուլղարաթուրքերը հաղթեցին 29 քաղաքներում [27]: Սա 2-ով ավելի է 2001-2005 ժամանակահատվածի համեմատ:

Թուրքական համայնքին հաջողվում է նաև համայնքանպաստ ծրագրեր իրականացնել պետական հատկացումների, զանազան դրամաշնորհ-

ների հաշվին: Թուրքերեն դասագրքերի տպագրությունը հովանավորում են Սոֆիայի համալսարանը և Լիբերալ ինտեգրացիոն հիմնադրամը: Պետական միջոցների հաշվին համայնքային ծրագրերի իրականացումը բավական լայն տարածում ունի Եվրոպայի թուրքական համայնքում: Նիդեռլանդներում բացահայտվել են դեպքեր, երբ, մասնավորապես, Ամստերդամի քաղաքապետարանից իբր թե համայնքային մշակութային ծրագրերի համար տրված հատկացումներն ուղղվել են ծայրահեղական թուրքական գրականության հրատարակությանը:

Թուրքական կուսակցության շեշտակի ակտիվացումը Բուլղարիայում երկակի վերաբերմունքի արժանացավ: Եվրաինտեգրացիոն պայմաններում բուլղարացիների զգալի մասը համարում էր, որ «Բուլղարիան թուրքերի կողմից յուրացվելու» մասին տեսությունը կորցրել է այժմեականությունը: ԵՄ ընդհանուր քաղաքական և անվտանգության համակարգը, իրոք, լուրջ երաշխիքներ է ստեղծում բալկանյան այս պետության համար, նվազագույնի հասցնում «Կիպրոսյան սցենարի» հավանականությունը: Մյուս կողմից՝ անհերքելի է, որ Անկարայում կձգտեն ազդեցության ծիրում պահել բուլղարաթուրքերին, և նրանց գործունեությունը կարող է ուղղորդված բնույթ ստանալ: Բուլղարիայի մամուլում շրջանառվում են տեղեկություններ, թե էթնիկ թուրքական կուսակցությունը գործում է Անկարայի հետ համաձայնեցված: Առկա են փաստեր, որ, մասնավորապես, 2005թ. ընտրություններում ձեռք բերված բարձր ցուցանիշներն Անկարայի «հովանավորչության» հետևանք են: Ընտրությունների օրը հատուկ ավտոբուսներով Թուրքիայից Բուլղարիա են ուղարկվել երկքաղաքացիություն ունեցող էթնիկ թուրքեր, որոնք իրենց տեղամասերում մասնակցել են ընտրություններին (դժվար չէ կռահել ում օգտին են քվեարկել): Ընդդիմությունը նաև հայտարարում է, թե տեղի են ունեցել ընտրակեղծիքներ. այն ընտրատեղամասերում, ուր ԻԱՇ-ի վարկանիշը բարձր չէր, այլ շրջաններից բերվել են ազգությամբ թուրքեր, որոնք անօրինական կերպով մասնակցել են քվեարկությանը [28]: 2006թ. մարտ ամսին անցկացված հարցումների տվյալներով՝ ԻԱՇ-ի վարկանիշը կազմել է միայն 8%, ինչը կարող է լինել մի կողմից՝ հեղինակության անկման հետևանք, մյուս կողմից՝ կարող է հանդիսանալ անուղղակի փաստարկ, որ նախորդ հունիսին տեղի ունեցած ընտրություններին ավելի քան 14% ցուցանիշը մասամբ չափազանցված է եղել: «Բուլղարական շատ քաղաքներ և գյուղեր էթնիկ թուրքերի վարչարարությանն են հանձնվել: Հնչում են մեծ թվով քննադատություններ ինչպես շարքային քաղաքացիներից, այնպես էլ քաղաքական գործիչներից և լրատվամիջոցներում՝ այն մասին, որ թուրքերենը որոշ շրջաններում գերիշխող է դառնում» [28]:

Անկարա-ԻԱՇ շահերի համադրման բացահայտ օրինակ էր 2005թ.

հոկտեմբերի 6-ին ԵՄԽՎ-ում Ռեջեփ Էրդոգանի ելույթը: Թուրքիա-ԵՄ բանակցությունների մեկնարկից 11 օր առաջ համաեվրոպական կառույցում իր ելույթից հետո վարչապետին ուղղվեցին քննադատական հարցեր՝ կապված Թուրքիայում ազգային փոքրամասնությունների իրավունքների պահպանման, Կիպրոսյան հարցի, քրդական խնդրի հետ: ԵՄԽՎ-ում բուլղարական պատվիրակության ղեկավար Յունալ Լյութֆին Էրդոգանին հարց ուղղեց Թուրքիայի տնտեսական հաջողությունների վերաբերյալ, ինչը թուրք վարչապետին ինքնագովազդի հնարավորություն տվեց: Դա վարչապետի հարցուպատասխանի միակ դրական հատվածը դարձավ:

1991թ. ընդունված բուլղարական սահմանադրությունը սահմանում է, որ Բուլղարիայի տարածքում չեն կարող ձևավորվել ինքնավար կազմավորումներ, ինչը միանշանակ թուրքական վտանգին էր առնչվում: Սահմանադրությունը նաև արգելում է էթնիկական կուսակցությունների գործունեությունը: Այս սահմանափակումը ևս կոնկրետ հասցեատեր ունի, սակայն ԻԱՇ-ը պաշտոնապես մերժում է, թե իրենք զուտ թուրքական, էթնիկ կուսակցություն են՝ նվազագույն թվով բուլղարացիների հաշվին: 2004թ. մարտին Քրքջաալի այցի ընթացքում Միացյալ Նահանգների դեսպան Ջեյմս Փերդյուն մտահոգություն հայտնեց կուսակցության մոնոէթնիկ լինելու կապակցությամբ, բուլղարաթուրքերին կոչ ուղղեց ԻԱՇ-ից բացի ինտեգրվել նաև այլ քաղաքական կազմակերպությունների: Ի պատասխան՝ Ահմեդ Դոդանը հայտարարեց, թե կուսակցության հիմքում էթնիկ սկզբունքը չի դրված: Իսկ Դոդանի տեղակալ Էմել Էթեմը (ներկայումս Բուլղարիայի փոխարչապետն է) հայտարարեց. «Դեսպան Փերդյուն ակնհայտորեն չի թարմացրել իր տեղեկությունները: Վերջին 2 տարում կուսակցության շարքերում էթնիկ բուլղարացիների չափաբաժինը հասել է 10%-ի» [29]: Այն պայմաններում, երբ էթնիկ թուրքերը կազմում են ողջ հանրապետության բնակչության 10%-ը, կուսակցության կազմում 10% բուլղարացիների առկայությունը բավական խոսուն փաստ է: Ինչպես նշվեց, ներկայումս խորհրդարանում գործող ԻԱՇ-ի 34 պատգամավորներից 2-ը բուլղարացի են: Կառավարական կաբինետում ԻԱՇ-ը ոչ թուրքերին առայժմ հաստիք չի տրամադրում: Նվազագույն չափով բուլղարացիների ներառումը և լիբերալ գաղափարախոսությունը նպաստեցին, որ ԻԱՇ-ը շրջանցի այս սահմանափակումը: Առկա էր նաև Արևմուտքի ակնհայտ աջակցությունը: Թուրքական աղբյուրները հաղորդում են, որ 1990-1991թթ. Բուլղարիան ենթարկվում էր արտաքին քաղաքական ճնշման՝ կուսակցությունը պաշտոնապես գրանցելու և ընտրություններին մասնակցելու հնարավորություն տալու համար: Մեծ Բրիտանիայի դեսպանն այդ ժամանակ Մոֆիայի գլխավոր դատավոր Դիմիտր Դոպովի հետ հանդիպմանը նշել էր, որ «բրիտանական կառավար-

րությունը կողջունի, եթե կուսակցության գրանցման համար դատախազն օգտագործի իր լիազորությունները»: «Կուսակցությունը գրանցվեց այդ ժամանակվա վարչապետ Լուկանովի հրամանի հիման վրա», - գրում է բուլղարաթուրքերի տեղեկատվական կայքէջը [30]: Նշենք, որ էթնիկ հենքի հիման վրա ձևավորված կուսակցությունների գործունեության սահմանափակման արդյունքում հայկական ավանդական կուսակցությունները Բուլղարիայում ներկայացված են ոչ թե ուղղակի, այլ մշակութային կառույցների տարբերակով: 2000թ. Բուլղարիայի սահմանադրական դատարանն արգելեց էթնիկ մակեդոնացիների կուսակցությունը:

2004թ. հուլիսին վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդոհանի Բուլղարիա կատարած այցի ընթացքում թուրքական դեսպանատանը տեղի ունեցած հանդիպմանը Դոդանը ևս նշել է, թե ԻԱՇ-ը բացառապես թուրքական կուսակցություն չէ, այլ աշխատում է բուլղար հասարակությանն ընդգրկելու ուղղությամբ: Էրդոհանը համաձայնել է, որ թուրքերով սահմանափակվելու պարագայում կուսակցությունը կգնա ինքնամեկուսացման: «Մենք ուրախությամբ արձանագրում ենք, թե ինչպես է թուրքական փոքրամասնությունն ակտիվորեն ստանձնում Բուլղարիայի վարչական կառավարման պատասխանատվությունը», - հայտարարել է Էրդոհանը [31]:

Եվրոպական *axisglobe.com* վերլուծական կայքէջի մի հրապարակման մեջ նշվում է, որ բուլղարաբնակ թուրքերը դարձել են Արևելյան Եվրոպայի ամենաազդեցիկ փոքրամասնություններից մեկը և Բուլղարիայի մուտքը ԵՄ այս փոքրամասնությանը կդարձնի Եվրամիության շրջանակում թուրքական լոբբիստական գործիք [13]:

Թուրքական կուսակցության «Էքսպանսիային» դիմագրավելը դարձավ բուլղարական «Ատակա» կուսակցության ձևավորման հիմնական պատճառներից և գործունեության գաղափարախոսություններից մեկը: Կուսակցության անվանումը, որ թարգմանաբար նշանակում է «գրոհ» կամ «հարձակում», պայմանավորված է հենց այդ տրամաբանությամբ՝ գրոհ ԻԱՇ-ի դեմ: Կուսակցության ղեկավար Վոլեն Սիդերովը զգացմունքային հոգեբանություն ունի, ինչն օգտագործվում է կուսակցապետին պիտակավորելու նպատակով, իսկ ընդդեմ թուրքական կուսակցության նրա ելույթներն ու գործունեությունը պատճառ են դառնում, որ «Ատական» թուրքական կառույցի կողմից բնորոշվի որպես «ֆաշիստական» և «ծայրահեղական»: ԻԱՇ-ի նախաձեռնության արդյունքում Սիդերովը քրեական հետապնդման է ենթարկվում: 2006թ. հունիսին խորհրդարանը վերացրեց Սիդերովի պատգամավորական անձեռնմխելիությունը:

Այնուհանդերձ, «Ատակա» կուսակցության վարկանիշն աճում է. 2005թ. ընտրություններին այն քվեների 8,93%-ով խորհրդարանում ստա-



ցավ 21 պատգամավորական տեղ [24]:

2006թ. հոկտեմբերի 22-ին Բուլղարիայի նախագահական ընտրությունների առաջին փուլում Սիդերովը և գործող նախագահ Գեորգի Պըրվանովը դուրս եկան 2-րդ փուլ, քանի որ ընտրություններին մասնակցել էր ձայնի իրավունք ունեցողների 38%-ը, մինչդեռ ընտրական օրենքը պահանջում էր նվազագույն 50%: Առաջին փուլում 4 թեկնածուների պայմաններում Պըրվանովը և Սիդերովը ստացան համապատասխանաբար 64 և 21%, 2-րդ փուլում՝ 75,9 և 24,01%:

Ահմեդ Դոդանի կազմակերպությունը միանշանակ առանցքայինն է, բայց ժամանակի ընթացքում Բուլղարիայում ձևավորվեցին թուրքական այլ ոչ մեծ միություններ՝ հիմնականում նշված կուսակցությունից հեռացած անձանց նախաձեռնությամբ:

1991-ին Դոդանի կուսակիցներից Ադեմ Քենանը հեռացավ կազմակերպությունից՝ հիմնադրելով Թուրքական դեմոկրատական կուսակցությունը: Կառույցն առայսօր չի գրանցվել Բուլղարիայի արդարադատության համակարգում: Այն ունի ռադիկալ պանթուրքական հայացքներ: Քենանի գաղափարախոսությամբ, Բուլղարիան պետք է մասնատվի բուլղարական և թուրքական ինքնավար հատվածների: Դոդանի կուսակցությունն անհամաձայնություն է հայտնել Քենանի ռադիկալ մոտեցումներին: Գործնականում Քենանի ընդգծված ազգայնական հայացքները հիմնականում դրական միավորներ բերեցին ԻԱՇ-ին՝ համեմատության մեջ նրան դարձնելով առավել «ընդունելի» գործընկեր:

ԻԱՇ-ից անջատված կուսակցական գործիչ Մեհմեդ Հոջան հիմնադրել է Ժողովրդավարական բարեփոխումների կուսակցությունը: Կուսակցության առաջացումը հիմնականում կապում են Մեհմեդ Հոջայի և Ահմեդ Դոդանի հարաբերություններում առկա սուր հակասությունների հետ: Կառույցի գործունեությունը տեղային բնույթ ուներ. դուրս չեկավ Քըրջաալիի տարածաշրջանից: 1994թ. խորհրդարանական ընտրություններին այն ստացավ համապատասխանաբար քվեների 0.2 և թուրք ընտրողների ձայների 4%-ը: Այս անհաջողությունը հիմնականում դարձավ կուսակցության վախճանը: 1994 և 1997թթ. նա հավաքեց 0.2%, կամ 24 հազար ձայն, իսկ 97-ին փոքր-ինչ ավելի՝ 27 հազար [32, p. 23]:

Բուլղարիայի թուրքերի նախկին հոգևոր առաջնորդ մյուֆթի Նեդիմ Գենչըրը դեկավարում է Արդարության ժողովրդավարական կուսակցությունը: Այն հանդես է գալիս իսլամիստական գաղափարներով, բայց նաև ունի որոշակի սոցիալիստական թեքումներ: Կուսակցությունը շոշափելի կողմնակիցներ չունի:

1997թ. կեսերին ձևավորվեց «Իրավունքների և ազատությունների ազ-

գային շարժում» (ԻԱԱՇ) քաղաքական կազմակերպությունը, որը վերոնշյալ ԻԱՇ-ի կլոնավորված կրկնօրինակն էր: Այս մարտավարությունն ընտրությունների ժամանակ ընտրողներին մոլորեցնելու հստակ նպատակ էր հետապնդում: Ընտրացուցակում նույնանման երկու անունների պարագայում ընտրողը կարող է շփոթվել, քվեարկել ոչ հիմնական կուսակցության օգտին: Կառույցը որոշակի իմաստով կորցնում է նաև իր «եզակիությունը» հասարակության աչքում: Այս տեխնոլոգիան ինքնին նորություն չէ: Նման մեթոդներ կիրառվել են նաև այլ երկրներում: ԻԱԱՇ-ը ղեկավարում էր ԻԱՇ-ի նախկին փոխղեկավար Գյուներ Թահիրը:

Ժողովրդավարական թնի շարժումը ղեկավարում է Օսման Օթթայը (որպես անկուսակցական աշխատել էր 39-րդ խորհրդարանում 2001-2005թթ.), Բուլղարիայի թուրքերի միությունը՝ Սեյհան Թուրքանը: Աշիմ Հաջիհասանը հիմնադրել է «Ուղիղ ճանապարհ թուրքական արմատներով Բուլղարիայի բնակիչներին» հիմնադրամը, որը հովանավորում է իսլամիստական-մահմեդական թեքումներով կրթական ձեռնարկներ:

## **2. Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդիրը և բուլղարաթուրքերը**

Բուլղարիայում թուրքական համայնքի և թուրքական լոբբինգի թեմայի շրջանակում պետք է կանգ առնել նաև Բուլղարիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի, ավելի ճիշտ՝ դրա չճանաչման իրողության վրա: Հետսոցիալիստական Բուլղարիայում, ինչպես, մասնավորապես, Եվրոպայի այլ պետություններում, Մեծ եղեռնի թեմայի հնչեղությունն աստիճանական քայլով առաջադիմում է: 1995թ. ապրիլի 20-ին բուլղարական օրենսդիրը խոսնակ Բլագովեստ Մենդովի գլխավորությամբ անդրադարձավ Հայոց ցեղասպանության հարցին: Մենդովն իր ելույթում հայտարարեց. «Ապրիլի 24-ին նշվելու է Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցը: Ժամանակակից աշխարհում սա զանգվածային ցեղասպանության առաջին փորձն էր, որ իրականացնողների համար մեծ խայտառակություն է: Որպես քաղաքակիրթ եվրոպական երկիր, որը վավերացրել է ՄԱԿ Ցեղասպանության կոնվենցիան և Մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող բոլոր միջազգային համաձայնագրերը, նշում ենք այս տարելիցը, որպեսզի պաշտոնապես հայտարարենք. մենք կանենք առավելագույնը, որպեսզի այլևս երբեք և ոչ մի տեղ չկրկնվի ցեղասպանությունը 21-րդ դարի նախաշեմին» [33]:

Խորհրդարանական լսումները ճանաչմամբ չավարտվեցին, և արդեն իսկ խորհրդարանում աշխատող թուրքական կուսակցությունն այս, ինչպես նաև հետագա տարիներին անմասն չէր դրանից: 2006թ. հունվարի 7-ին

«Ատակա» կուսակցության խմբակցությունն առաջ քաշեց բուլղարական օրենսդիրի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը: 10 օր անց փաստաթուղթն ուղարկվեց խորհրդարանի արտաքին հարաբերությունների և մարդու իրավունքների ու կրոնական հարցերով հանձնաժողովներին: Հատկանշական է, որ այդ նույն օրը երկրի վարչապետ Սերգեյ Ստանիշևը պաշտոնական այցով մեկնել էր Անկարա: Փաստաթղթում նշվում էր, որ Օսմանյան կայսրությունը ցեղասպանություն է գործել նաև բուլղար ժողովրդի հանդեպ, ուստի «հայերի դեմ գործադրված ցեղասպանությունը նաև բուլղար ժողովրդի պատմության տեսանկյունից առանձին խորհուրդ է պարունակում»: «Եթե հաշվի առնենք (Եղեռնի ճանաչման- Հ. Ն.) միջազգային վիճակը, Բուլղարիան Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նույնիսկ ուշացել է», - նշված էր օրենսդիր նախաձեռնության մեջ [33]:

«Ատակա» կուսակցության ղեկավար Վոլեն Սիդերովը հեղինակի հետ մի հանդիպման ժամանակ նշել է, որ իր համար կարևոր է նաև հոգևոր գործոնը, Հայաստանի առաջին քրիստոնյա պետություն լինելու և քրիստոնեական արժեքներ կրելու ու դրանց համար պատմական փորձություններ հաղթահարելու հանգամանքները: Ճանաչման ճանապարհին գորեղ պատնեշ եղավ խորհրդարանում հիմնավորապես հաստատված ԻԱՇ-ը: Պատգամավոր Ռեմզի Օսմանը թուրքական մամուլին ասաց, թե «ճանաչումը կհակասի ինչպես պատմական եղելությանը, այնպես էլ Բուլղարիայի ազգային շահերին»:

«Մենք այդ կուսակցության սադրանքներին խաղալիք չենք դառնալու և շատ հստակ ցուցադրելու ենք մեր դիրքորոշումը, այսպես կոչված, ցեղասպանության հարցում: Ամեն ինչ կանենք, որ օրինագիծը մերժվի ոչ թե խորհրդարանում, այլ հանձնաժողովների մակարդակով», - նշում էր Օսմանը [34]: Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրինագիծն, այնուամենայնիվ, դրվեց քվեարկության և 2006թ. մայիսի 10-ին մերժվեց 55 կողմ, 79 դեմ և 49 ձեռնպահ հարաբերակցությամբ: Բուլղարիայի մուտքը ԵՄ կարող է նպաստել, որ Հայկական հարցը Բուլղարիայում լրացուցիչ հնչեղություն ստանա: Արժանահիշատակ է նաև, որ իտալացի կինոռեժիսորներ Տավիանի եղբայրների «Արտույտների ազարակը» ֆիլմի նկարահանումների մի մասն ընթացել է Բուլղարիայում և սա ևս կարող է առաջ մղել հարցը տեղի հասարակության համար:

Բուլղարիայի թուրքական համայնքի հաջողությունները, կազմակերպված և համակարգված աշխատանքը վկայում են արտերկրի համայնքների հետ աշխատելու արդյունավետությունն ու կարևորությունը: Թեև միանշանակ է, որ չկա այնպիսի օտար պետություն, որտեղ հայազգի քաղաքացիները կազմում են ընդհանուր բնակչության 10%-ը, ինչպես էթնիկ թուրքերը Բուլ-

դարիայի պարագայում, սակայն թերևս տեղին է նաև հետևյալ հարցադրումը. արդյո՞ք լիարժեք է օգտագործվում սփյուռքի ներուժը: Որոշ պետություններում կան հայազգի օրենսդիրներ (Լիբանան, Ֆրանսիա, Կանադա, Ռումինիա, Կիպրոս), ներկայումս բուլղարական օրենսդիրում կա 1 հայազգի պատգամավոր՝ Ռուբեն Գրիգորյանը «Միմեոն երկրորդ» կուսակցությունից: Դրա կողքին՝ որքանո՞վ է օրինաչափ, որ հայաշատ Միացյալ Նահանգների Կոնգրեսում գոյություն չունի ոչ մի հայազգի կոնգրեսական: Կամ որքանո՞վ է Ֆրանսիայում միակ հայազգի պատգամավոր Պատրիկ Դևեջյանի առկայությունը լիարժեք արտացոլում մեր իրական հնարավորությունները: Հայաշատ Ավստրալիայում, Լեհաստանում, Շվեյցարիայում ևս հայտնի չեն ակտիվ հայազգի քաղաքական գործիչներ:

*Հունվար, 2007թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Tuncer Can & Martin Stilyanov Todorov*, Questioning Diglossia of the Language of Turks of Bulgaria, Syracuse 2005, <http://middleeastinfo.org/forum/viewtopic.php?p=61549>.
2. *Tuncer Can & Martin Stilyanov Todorov*, Turks of Bulgaria: Assimilation Policy and Linguistic Oppression, Syracuse University, December 2004.
3. *Lilia Petova*, The Ethnic Turk in Bulgaria, Social Integration and Impact on Bulgarian Turkish relations, 1947-2000, Budapest Economics.
4. “Bulgaria Turks” <http://www.ingilish.com/diglossia.htm>
5. *Diana Mishkova*, “Modernization and Political Elites in the Balkans Before the First World War”, *Ali Ahmedov*, “The Turks of Bulgaria (1945-1983)”, “The Turks”, Ankara 2002, Yeni Turkiye publications.
6. *Lilia Petkova*, The Ethnic Turks in Bulgaria: Social Integration and Impact on Bulgarian – Turkish Relations, 1947-2000, The Global Review of Ethnopolitics, Vol. 1, no. 4, June 2002.
7. *Dimitrova Donka*, 1997 Bulgarian Turkish Immigrants of 1989 in the Republic of Turkey (Adaptation and Changes in the Cultural Model). In Between Adaptation and Nostalgia: The Bulgarian Turks in Turkey. 1997, March 17, 2001, archived at <http://www.omda.bg/imir/studies/nostalgia.htm>.
8. Nuray Ekici, “The Diaspora of the Turks of Bulgaria in Turkey”; [http://www.emz-berlin.de/projekte\\_e/pj41\\_pdf/ekici.pdf](http://www.emz-berlin.de/projekte_e/pj41_pdf/ekici.pdf)
9. *Ali Eminov*, “The Turks of Bulgaria”; “The Turks”, Ankara 2002, Yeni Turkiye publications.
10. *Stoyanov Valeri*, “Turkoto Naselenie v Bulgaria mejdo Polyusite na Etnicheskata

- Politika”// The Turkish Population in Bulgaria between the Poles of Ethnic Policy, Sofia, 1998.
11. Bulgarian Central State Archives, Fond 1b, Opis 35, a.e 133 – 1989, <http://www.isn.ethz.ch/php/documents/2/890623.htm>
  12. *Eroglu H.*, “The Question of Turkish Minority in Bulgaria from Perspective of International Law. In: The Turkish Presence in Bulgaria”, Ankara, 1986.
  13. *Can Karpat*, “Bulgarian Turks: From Assimilation to Power”, [www.axisglobe.com](http://www.axisglobe.com).
  14. *Omer Turan*, “Turks in Balkans”, “The Turks”, Ankara 2002, Yeni Turkiye publications.
  15. <http://www.ingilish.com/diglossia.htm>
  16. <http://www.ingilish.com/diglossia.htm>
  17. *Кънев Кр.*, Законодателство и политика към етническите и религиозните алцианства в България. В: Кръстева, А. (съст.) Общности и идентичности в България, София, 1998.
  18. “Bulgarsitan’dan 70 Turk Ogrenci, Tatilini Tekirdag’da degerlendiriyor”, “ВТНА” Bulgar-Turk Haber Ajansi - 24, 07 2004.
  19. Turkey and Bulgaria – Rapprochement through customs, Can Karpat, [www.axisglobe.com](http://www.axisglobe.com).
  20. [http://en.wikipedia.org/wiki/Movement\\_for\\_Rights\\_and\\_Freedoms](http://en.wikipedia.org/wiki/Movement_for_Rights_and_Freedoms)
  21. <http://www.dps.bg/cgi-bin/e-cms/vis/vis.pl?s=001&p=0368&g=>
  22. *Mila Maeva*, Bulgarian Turks and The European Union.
  23. “3 Turk Avrupa Parlamentosu’nda”, “Milliyet”, 21.12.2006.
  24. <http://www.parliament.bg>
  25. The Budgetary Crisis in the Bulgarian Government between the Turkish and Bulgarian Coalition Partners, *Ayşe Ozkan*, ASAM Balkan Studies Desk, Stratejik Analiz, No 45, 2004.
  26. “ВТНА” Bulgar-Turk Haber Ajansi - 08, 07 2004.
  27. <http://www.seeurope.net>
  28. [http://en.wikipedia.org/wiki/Movement\\_for\\_Rights\\_and\\_Freedoms](http://en.wikipedia.org/wiki/Movement_for_Rights_and_Freedoms)
  29. Radio Free Europe/Radio Liberty, Prague, Czech Republic, RFE/RL, Newslines, Vol. 8, No. 49, Part II, 15 March 2004, Vol. 8, No. 49, Part II, 15 March 2004.
  30. [www.bg-turk.com](http://www.bg-turk.com), “Kralice 2. Elisabeth, DPS’nin kaydi icin kulis yapmis...” 11.01.2007.
  31. [www.ntvmsnbc.com](http://www.ntvmsnbc.com) 7 հունիսի, 2004:
  32. “The Armenian Genocide. The World Speaks Out, 1915-2005”, USA, California, 2005.
  33. “Bulgaristan'da Ermeni Soykirimini Tasarisi”, “Milliyet”, 24.02.2006.
  34. Bulgarian Electoral Statistics, Bulgarian Association for Democratic Elections, Sofia, 1994.

## ТУРКИ БОЛГАРИИ: 5-я КОЛОННА АНКАРЫ

*Айкарам Наапетян*

### Резюме

Этнические турки составляют приблизительно 10% населения Болгарии. При этом из 240 законодателей парламента страны этническими турками являются 32. Таким образом, пропорционально число болгарских турок в парламенте больше, чем по части населения. Начиная с 2001г. политическая партия этнических турок Болгарии – «Движение за права и свободы» (ДПС), участвует в формировании коалиционного правительства Болгарии.

Факты указывают, что Турция закулисно поддерживает свою ДПС, а последняя пытается проводить лоббинг Турции на Балканах и в Европе. Со вступлением Болгарской Республики в ЕС этот вопрос приобретает новую актуальность. Следует заметить, что из 18 от представителей Болгарии в Европарламенте 3 из турецкой партии ДПС. Успех болгарских этнотурок обращает внимание и на попытки Турции (а в последние годы также и Азербайджана) сформировать свой этнический лоббинг, организовать собственный «спюрк» для борьбы с армянской диаспорой и самой РА.